



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 46.

ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1901

ԹԻՒ 5

ԲՈՐԲՈՒՔԱՄ ՀՆՈՅԸ

Աստուած չարչարանքէ և մահէ միշտ չպահեր զանոնք որ իրենց պարտականութիւնը կը կատարեն. եթէ պահէր, մեր այնպիսի ժամանակներ ցուցած հնազանդութիւնը քիչ արժէք պիտի ունենար. եթէ նախնի եկեղեցիին մէջ քրիստոնէաները այնպէս նախախնամարար պաշտպանուէին որ կրակը չայրէր զանոնք, ոչ սուրը վիրաւորէր, և ոչ վայրի դազանները պատառէին, արիւթիւն պիտի չպահանջուէր ֆրիստոսը խոստովանելու և կուռքերու երկրպագութիւնը մերժելու. Աւելի աղէկ էր որ ֆրիստոսի հետևողներուն սէրն ու հաւատարմութիւնը ցուցուէր այնպէս ինչպէս ցուցուց Ստեփանոս, որ համարձակեցաւ դաւանիլ ճշմարտութիւնը իր արեան ծարախ թշնամիներուն ներկայութեանը, և յանձն առաւ մեռնիլ ուրախութեամբ և իր սպանիչներուն համար աղօթք ընելով: Համբերութիւնն ու արիւթիւնը որ ֆրիստոսի վկաները և զայն դաւանողները հաւատարիմ ըրին մինչև ի մահ, մարդիկը մեծ ուժով կը քաշեն սուրբ և բարեսէր կեանքի զոր Աստուած կը պահանջէ: Բայց մահէ ազատման բազմաթիւ հրաշքներ անոնց վրայ այնքան պիտի չներգործէին:

Եւ սակայն գիտենք թէ Աստուած կարող է ազատել իր ծառաները վրտանդէ: Ան կրնար տասներկու դունդէ աւելի հրեշտակներ զրկել և ֆրիստոսի թշնամիները յաղթահարել: Բայց մեզի համար աւելի աղէկ էր որ անկա թողուէր իր թշնամիներուն ձեռքը, որպէս զի խաչուէր և նորէն յարութիւն առնէր մեր փրկութեան համար: Եւ անիկա մեզ ամեննեղութենէ կրնար ազատել, միայն թէ այն ատեն մեր նկարագիրները պիտի չընդունէին



խրատը, այսինքն կրթութիւնը, որ կը հասունցնէ զանոնք և երկինքի կը յարմարցնէ:

Թէ Աստուած ի՞նչ դիւրութեամբ կրնար ազատել մեզ, ցուցուց երկը Մանկանց պարագային մէջ: Անոնք կատարելապէս ապահով էին այն հրաբորբոք հնոցին մէջ, վասն զի Աստուած պահեց զանոնք: Նորէն կարգացէր այն զարմանալի պատմութիւնը Դանիէլի երրորդ գլխուն մէջ:

Գիտցէք, սիրելի տղաք, թէ Աստուած Ամենակարող է, և բան մը չկայ

որ դժուար ըլլայ անոր: Անիկա վտանգէ կ'ազատէ մեզ երբ ազատուը աղէկ է մեզի, և երբ աղէկ չէ, կրնայ մեր նեղութիւնը և չարչարանքը ազատուէն աւելի մեծ օրհնութիւն ընել, եթէ մենք ապաւինինք անոր:



ՄԻՆՉ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԿՈՒ ԳԱՆ Կ'ԵՐԹԱՆ
 «Կարծես թէ երէկ էր» կ'ըսէ ձեզի մեծ մայրը հառաչելով, և դուք, տղաք ու աղջիկներ, զարմանքով կը նայիք անոր վրայ: Պատճառն այն է

որ մեծ մայրին կեանքը այն ատեն սկսաւ երբ անցեալ դարը դեռ նոր սկսած էր : Լաւ կը յիշէ անհկա առաջին երկաթուղիին կառախումբը տեսնելը : Ինք գրեթէ կին եղած էր երբ առաջին հեռագիրը զարնուեցաւ : Մագերը ճերմկած էին՝ դիտութեան շնորհիւ երկտարական լոյսին գտնուելէն և քաղաքի փողոցներուն պայծառ ցերեկուան պէս լուսաւորուելէն առաջ : Մեծ մայրին կեանքը երկայն եղած է և շատ մը զարմանալի փոփոխութիւններ տեսած է, և սակայն ետ նայելով այն օրերուն երբ ինք դպրոց գացող աղջիկ մըն էր, կ'ըսէ ձեզի՝ «Կարծես թէ երէկ էր» :

Նոր տարին, զոր այնքան սիրով ողջունեցինք, երբեք պիտի չթողու մեզ այնպէս ինչպէս գտաւ : Դեռահաս անձինք հազիւ ժամանակ կ'ունենան իրենքզիրենք շնորհաւորելու թէ մեծցած են, և ահա կը տեսնեն թէ նուրբ կնճիռներ գծած է ձեռք մը իրենց ճակատներուն վրայ, և յետոյ օր մը կ'իմանան թէ չեն կրնար տեսնել այնպէս ինչպէս կը տեսնէին առաջ, և կը զարմանան թէ ակնոցի պէտք ունին :

Յետոյ յաջորդ բանը կ'ըլլայ իրենց փայլուն մազերուն մէջ ճերմակ թելեր, և գուցէ քիչ մը պնդութիւն ծունկերուն մէջ : Օր մը տղան հայելիին մէջ իր դէմքը մանկական կը տեսնէ : Ուրիշ օր մը, բայց կարճ ժամանակ ետքը, իրեն այնպէս կ'երևնայ թէ կ'արթննայ և կը հասկնայ թէ երիտասարդ մը եղած է, քիչ մը աւելի ետքը՝ գիրուկ մարդ մը : Եւ սակայն իր և պատանեկութեանը մէջ տեղ ինկած տարիները ամառուան օրուան մը չափ կարճ կ'երևնան :

Բայց եթէ ժամանակը այսպէս մոգական ազդեցութիւն կ'ընէ մեր վրայ, ունինք մաս մը որուն վրայ անոր ազդեցութիւնը չունի իշխանութիւն : Սիրտը չխորշումիր, ոչ ալ կը ծռի կամ կը տկարանայ տարիներուն անցքին հետ : Եթե անասունին մէջ սէրը աւելի գեղեցիկ է քան տասնըօթնին մէջ : Մարմինը կը մաշի գործածուելով, բայց հաւատքը աւելի կը զօրանայ որչափ աւելի գործածուի : Իսկական անձը, անձը որ կը սիրէ և կը յուսայ և կը գթայ, որ կը մաքառի չարին վրայ յաղթութիւն տանելու համար, որ ուրիշներուն օգնութեան կը փութայ, անձը որ կը վստահի Երկնաւոր Հօրը՝

ժամանակէն և ժամանակին փոփոխութիւններէն վախճալու բան մը չունի :



ՄԱՇՈՂԱԼԱՆՏԻ ՄԷՋ ԳԵՂ ՄԸ

Հարաւային Աֆրիկէի մէջ Բրիտանական ստացուածներուն ամենէն հիւսիսային մասը կը կոչուի Բոտսուա, Սըր Սէսիլ Բոտսի անունով, որ աւիսներով Գիմպըրիի մէջ պաշարուեցաւ պահպան զինուորներու հետ : Եւ որովհետեւ չկար մարդ մը զոր Պուրբը այնչափ սաստիկ ատէին որչափ կ'ատէին Սըր Սէսիլ Բոտսը, ուրախ պիտի ըլլային եթէ գերի բռնէին զանիկա : Բոտսուա 730,000 քառակուսի մղոն տարածութեամբ ընդարձակ երկիր մըն է, և ուստի Մեծ Բրիտանիոյ և Իրլանտայի վեց անգամէն աւելի

մակուան նախարարապետին անունով, Բայց Մաշոնաները, իրենցմէ աւելի պատերազմասէր դրացիներէն պաշտպանուելու համար, երբեմն իրենց գեղերը կը շինեն անանկ տեղեր որոնց մտենալ դժուար է և որոնք դիւրաւ կը պաշտպանուին : Ասանկ գեղ մը կը ցուցուի այս պատկերին մէջ :

ԳԵՂԱՅԻՆ ԳԵՄՔ ՄԸ

«Մայրիկ», ըսաւ Արաքսի կամացուկ մը, մինչ պնակ մը և մաքուր անձեռոց մը կը դնէր կերակուրի սեղանին վրայ : «Գուն չես գիտեր թէ որչափ կը սիրեմ Հօրաքոյր Աննայի ստութեան երթալ» : «Սովորականին պէս նորէն անանկ զուարթ և առօղջ է», հարցուց մայրը հետաքրքրութեամբ



խոշոր է : Երկու գլխաւոր ցեղեր կը պարունակէ, Մաթապէլները և Մաշոնաները : Մաթապէլները պատերազմասէր են, և անցեալին մէջ Զուլուներուն պէս ապրած են, իրենց դրացիները կողոպտելով : Մաշոնաները աւելի խաղաղասէր և ժրջան են և անոնց մէջ սկսուած քրիստոնէական գործը յաջողութիւն գտած է : Գանի մը տարիներ առաջ անոնց ցեղապետը, Խամա, Անգղիա գնաց և պատուական տպաւորութիւն մը թողուց այն Անգղիացիներուն վրայ որոնց հետ տեսնուեցաւ : Մասնաւորապէս ազգայնացի որ կառավարութիւնը արգիլէ գինովացնող ըմպելիներ Մաշոնայանտ մտցնելը, վասն զի իր ժողովրդին կործանում կը բերեն անոնք : Մաշոնա լանտի գլխաւոր քաղաքը, ուր Բոտսի սիրոյ կառավարիչը կը նստի, Սոլզբըրի է, որ այսպէս կը կոչուի Անգղիոյ հի-

երբ կէս օրուան ճաշի համար լաթ մը կը փռէր աճապարանքով : «Կարծեմ անանկ է, մայրիկ, և շատ սիրեց հացը և անուշեղէնը» : «Գիտեմ թէ Հօրաքոյր Աննա իրեն տարած ուտելիքներուց համար շնորհակալ եղող սիրտ մը ունի, և իրեն բնական է այդ, և այդ սիրտն է գաղտնիքը որուն համար իմ փոքրիկ աղջիկ սիրով կ'այցելէ անոր սոյնպէս չէ՞, սիրելիս» : «Ոչ, մայրիկ», պատասխանեց Արաքսի մտածկոտ կերպով մը, «ինչու որ երբ տանելու բան չունենամ ալ, նորէն նոյն զուարթ երեսը կը ցուցնէ միշտ : Իրեն գեղեցիկ դէմքն է որ զիս կը քաշէ : Եւ երբ քովէն ետ կու գամ, միշտ ինքզինքս մաքրուած կը գգամ : Կեմ գիտեր ինչու : Կը փափաքեմ որ ատանկ անուշ դէմք մը ունենամ, որպէս զի ամէն մարդ սիրէ զիս ինչպէս կը սիրէ Հօրաքոյր Աննան» :

«Դուն առանկ դէմք մը կրնաս ունենալ, սիրելիս, եթէ Հօրաքոյր Աննայի դեղը ունենաս»

«Ինչ դեղ, մայրիկ, շատ զարմանալի բան կ'ըսես: Անիկա իրեն երեսը առանկ հրապուրիչ ընելու համար դեղ չգործածեր, իրաւ որ չգործածեր»

«Չէ, անշուշտ կը գործածէ: Անոր գործածածն է անանկ բան մը զոր իմ փոքրիկ աղջիկս ալ կրնայ գործածել և անոր պէս գեղեցիկ դէմք մը ունենալ: Եւ այս է ան. գեղեցիկ խորհուրդներ խորհիլ, և գեղեցիկ խորհուրդներէն գեղեցիկ դէմք յուսալ կու գայ: Սիրելի զաւակս, դէմքը հոգիին հայելին է, և հոգին ինչ որ խորհի, դէմքը կ'արտայայտէ զանիկա: Երբեք մի մտածեր դառն և անհաճոյ խորհուրդներ, հապա միայն անանկներ որ մաքուր, անանձնասէր և քաղցր են, և ժամանակին իմ փոքրիկ աղջկանս դէմքն ալ այնպէս գեղեցիկ և հրապուրիչ պիտի ըլլայ ինչպէս որ է Հօրաքոյր Աննայի դէմքը»



ՅԻՄԱՐԱԿԱՆ ՓԱՓԱՔՆԵՐ

Փոքրիկ տղայ մը խնձորի ծառի մը վերի ծայրը հասուն խնձոր մը տեսնելով ըսաւ, «Երանի՜ թէ բաւական բարձր ըլլար հասակս և այդ խնձորին հասնէի»: Խնձորը անոր գլխէն տասնը հինգ ոտք բարձր էր: Ուստի տղին հասակը պէտք էր որ այդչափ բարձր ըլլար, եթէ անոր փափաքը կատարուէր: Տղին քով գտնուող մէկը ըսաւ, «Մննիկ, եթէ այդ խնձորը փրցնելու կարող ըլլալու չափ բարձրահասակ ըլլայիր, այս իրիկուն ձեր տունը պիտի չկրնայիր մտնել առանց ձեռքերովդ և ոտքերովդ կծկելու: Անկողինդ քու հասակիդ կէսին անգամ կարճ պիտի գար, և պիտի ստիպուէիր բռնոր քու հանդերձներդ նետել և նոր հանդերձներ ունենալ, և այն ատեն հանդերձիդ ծախքը հիմակուանին չորս անգամը պիտի ըլլար: Ըսել է թէ մէկ խնձորի համար առանկ խոշոր ծախք մը պիտի ընէիր, այնպէս չէ»: «Այո» ըսաւ մննիկ, «չխորհեցայ թէ ինչ յիմար եղայ»:

Բայց կան մարդիկ որ միշտ կը գանգատին մեր մահկանացու կեանքին սահմանաւոր ըլլալուն դէմ: Կը փափաքին որ կարող ըլլան տեսնել Ովկիանոսէն անդին, և դիտել Փեքինի բանակները, կամ տեսնել թէ ինչ կ'ընեն Հրատ մարտակին բնակիչները, եթէ հոն կը գտնուին բնակիչներ: Բայց մենք արդէն շատ բաներ ունինք

ստրվելու, շատ բաներ՝ ընելու, և շատ բաներ՝ վայելելու այն շրջանակին մէջ ուր դրած է մեզ Աստուած: Եւ եթէ հաւատարիմ գտնուինք այդ շրջանակին մէջ, անիկա պիտի ընդարձակի, քանի մեր հոգիները ընդարձակին, անսահման ապագային մէջ:

ՊԱՏ. ԹՈՎԱՄԱ ՊՅՅԱՃԵԱՆ

Երբ 1857ին առաջին անգամ Խարբերդ գացինք բնակիլ, յաճախ կը լսէինք Պատ. Թովմաս Պոյաճեանի անունը: Բայց որովհետեւ այդ ատեն անիկա Ամերիկա կը գտնուէր, կարող չեղանք տեսնել զանիկա Աւետարանական Միութեան Ժողովին մէջ ի Տիարապետի նոյն տարուան Հոկտեմբերին: Անոր վրայով աւելի տեղեկու-



թիւն ունենալու փափաքելով, որ մը հարցուցինք Պատ. Մարտիրոս Շմաւոնեանի, «Ինչպիսի մարդ է Պատ. Թովմաս»: Պատասխանեց, «Ինձմէ շատ մը աւելի աղէկ քարոզիչ մը և յոյժ աւելի կրթեալ անձ մը»: Այս պատասխանը կը ցուցնէր Պատ. Մարտիրոսի յատկանիշն եղող համեստութիւնը և նոյն ժամանակ կը յայտնէր անոր բարձր սքանչացումը այն անձին վրայ, զոր կը նկատէր այդ կողմերու Հայ Աւետարանական Ժողովրդին գլխաւոր զարդը:

Այնուհետև քանի մը անգամ Պատ. Թովմասի հետ տեսակցելու հաճոյքը վայելցցինք, նաև հիւրընկալուեցանք անոր տան մէջ, բայց մեր վերջին տեսակցութիւնը ունեցանք 1875ին անոր մահէն քսան տարիէ աւելի առաջ: Պատ. Թովմաս ծնաւ 1833ին, Կ. Պոլսու եկաւ 1852ին, և Պէպէքի ձեմարտին

նախկին ընթացաւարտներէն մէկն եղաւ: Իր ծննդավայրին, Տիարապետի եկեղեցիին հովիւ ձեռնադրուեցաւ 1863ին: Անոր աշխատութիւններուն պատմութիւնը հրատարակուած է յաբաթաթերթ Աւետարանի 1895 Նոյեմբերի մէկ թիւին մէջ անոր կենսագրական համառօտ նկարագրութիւնով: Բազմակողմանի տաղանդի տէր անձ մըն էր ան, հաւասար յաջողութեամբ կը գրուէր զանազան յատկութիւններ պահանջող այլևայլ գիրքեր: Տարիներով իր եկեղեցիին հոգևոր առաջնորդը և ուսուցիչն եղաւ, և յետոյ 1881է մինչև 1895 Բրիտանական փոխ-Տիարապետու Տիարապետի և Խարբերդի մէջ, ուր ամենէն աղէկ կը ծանուցուի ան, ախնաժանքով և սիրով կը յիշուի, և բոլոր իրեն հետ տեսնուողներուն վրայ ճամբարտ քրիստոնեայ անձի մը տպաւորութիւնը թողած է: Կը մտքեղծ մեր դեռահասակ ընթացողներուն համար, որոնք հոս անոր պատկերին վրայ կը նային, անոր կեանքին նման օգտակար և պատուաւոր կեանք մը:



ՊԱՏՈՒՌԱԾ ՄՈՒՐՀԱԿ

Թերևս ուրիշ տղաք չիմացան երբեք թէ ինչ էր Նէտի և Բոյի մէկ մէկու հետ աւրուելուն պատճառը: Բայց յայտնի էր թէ անոնք աւրուած էին իրարու հետ: Եւ թէպէտ մէկը չգիտնար թէ անոնց գտնութեան պատճառն ինչ էր, այն երկուքէն զատ կար մէկը որ գիտէր թէ հաշտուելու ջանք մը կ'ըլլար:

Գարնան առաւօտ մը փոքրիկ ձէք Սիբերո կը պտտէր դաշտին վրայ՝ իր բազուկին ներքև գիրք մը առած, և իր յստակ թուխ աչքերուն մէջ զուարթ նայուածք մը կար: Կէս օր տեղ արձակուողի (վազանց) օր մըն էր այն օրը, և ձէք կ'երթար այդ օրը կարգալով անցնել, ինչպէս սովորութիւն ըլլած էր ընել արձակուողի օրերը: Դաշտին վրայ կար տեղ մը որ մասնաւոր կերպով լաւ յարմարութիւն ունէր կարգալու համար, և պզտիկ դէպ ի հոն ուղղեց իր քայլերը այդ արևոտ կէսօրէն ետքը: Ժպտեցաւ տեսնելով այն մեծ ծառը, որուն տերևները կը հովանաւորէին զինքը անոր երկու խոշոր ստորուն ներքև նստած առենյղ: Ձէք, իր կարգացած գիրքին խորունկ ուշադրութիւն տուած ըլլալով, չէր գիտեր թէ հոն օրչափ ժամանակ նստաւ: Բայց երբ ձայներ լսելով գլուխը վեր առաւ իր գիրքին վրայէն, կէսօրէ ետքի արևը դէպ ի

արևմտեան հորիզոնը իջած և օդը քիչ մը զովացած էր :

«Կը տեսնեմ թէ ես յանցաւոր եմ այն խնդրին մէջ, Նէտ : Ճշմարտապէս կը ցաւիմ, և կը յուսամ թէ պիտի ներեալ ինձի :» Անշուշտ կը ներեմ, Բոյ :» պատասխանեց Նէտ : «Բայց չեմ գիտեր թէ ինչպէս կրնայիր պնդել թէ չիտակ էր ըրածդ :»

«Բայց չեմ ուզեր ձեռք սեղմել երթալէդ առաջ :» ըսաւ նորէն Բոյ : «Ես—ես կը ցաւիմ :» «Հարկաւ ձեռք կը սեղմեմ :» Այնուհետև ձէք այլ ևս ուրիշ բան չլսեց անկէ : Երկու բարեկամները դաշտին վրայ պտըտեցան և ձէք առանձին մնաց խոշոր ծառին տակ : Ամէն բան այնպէս արագ անցած էր որ տղան մինչև ժամանակ մը ետքը չկրցաւ հասկնալ թէ ինչ պատահած էր արդեօք : «Ուրիշ եմ որ հաշտուեցան անոնք, ինչ որ է :» ըսաւ ինքիբերն և շարունակեց ընթերցումը : Բայց օրեր անցան և տակաւին կը թուէր թէ Նէտ հեռու կը կենար իր հին աշակերտակիցէն :

Բոյ և Նէտ միշտ նշանաւոր եղած էին դպրոցին մէջ : Երկուքն ալ բարի տղաք էին և ամէնուն սիրելի : Փոքրիկ ձէք այդ օրերը սովորութիւն ըրաւ անոնց բոլորտիքը դառնալ, ուզելով բարիք մը ընել անոնց, և շատ կերպեր խորհեցաւ նպատակը գործադրելու համար : Վերջապէս առաւօտ մը ըսաւ մեծ վարժապետին, «Արդեօք կարելի չէ՞ Մը. Հարթ, որ օր մը ըսէք մեզի, աշակերտներուս, թէ ինչ է ներել, Լսել կ'ուզեմ ներել անանկ մէկու մը որ ներում կը խնդրէ :»

Վարժապետը արագ մը նայեցաւ պղզտիկին խոռվեալ աչքերուն մէջ և, «Մենք պիտի ջանանք ընել ինչ որ կըրնանք ընել այդ մասին :» ըսաւ :

Հետևեալ օրը կիրակի էր, և վարժապետը ներման վրայ խօսեցաւ : «Ես չեմ կրնար աւելի ազէկ բան մը ըսել,» աւելցուց իր վերջաբանին վրայ, «քան կրկնել Մը. Պիլքրի խօսքը, թէ Ներումը պէտք է ըլլայ ջնջուած պարտամուրհակի մը նման, որ կը պատուուի և բոլորովին կ'այրուի, այնպէս որ ա՛լ երբէք չկրնար պարտականին ցուցուիլ :» Ներում չէ այն որ յանցաւոր ճանցուածին փաստերէն համոզուիլ կը ձևացնէ մարդ, բայց տակաւին սիրոյ հոգի չցուցնէր : Միտք բերէք թէ մեր երկնաւոր Հօր կ'աղօթենք, Մերի ներք մեր պարտքերը ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն : Պիտի ուզէի՞նք ներում ընդունիլ այնպէս ինչպէս որ մենք կը ներենք ուրիշներուն :

Երբ եկեղեցին արձակուեցաւ, տըղաքը հրապարակին վրայ պտըտեցան երկու երկու, երեք երեք, բաց ի երկու տղոցմէ, և այդ երկուքն էին Նէտ և Բոյ, որոնք իրենց սենեակները քաշուեցան : Անոնց երկուքն ալ միտքերուն մէջ միևնոյն բառերը կը հնչէին, «Ներումը պիտի ըլլայ ջնջուած պարտամուրհակի մը նման, որ կը պատուուի և բոլորովին կ'այրուի, այնպէս որ ա՛լ երբէք չկրնար պարտականին ցուցուիլ :»

«Արդեօք վարժապետը բան մը իմացած էր,» կը մտածէր Բոյ, «եթէ այդպէս կարծէի, նորէն պիտի խօսէի :» Այդ վայրկեանին, տղին սենեակին դուռը արագ մը զարնուեցաւ, և առանց պատասխանի սպասելու Նէտ բացաւ դուռը և ներս եկաւ : Այտերը կաս կարմիր կտրած էին և աչքերը կը փայլէին : «Ես—ես կը կարծեմ թէ, Բոյ,» ըսաւ քիչ մը խեղդուկ ձայնով մը, «ներում խնդրելու կարգը իմն է : Եւ կը հաւատամ թէ երբ ես քեզմէ ներում խնդրեմ, դուն քեզմէ պարտամուրհակը պիտի պատուես և այրես :» «Բայց դուն ինձմէ ներում խնդրելու պատճառ մը չունիս,» ըսաւ Բոյ եռանդով : «Ուրեմն ամէն բան լինցած է, Նէտ :» «Շատոնց լինցած է,» ըսաւ Նէտ, «միայն թէ ջնջուած պարտամուրհակը պատուելու ազնուութիւնը չունեցայ :»

Եւ երբ, երկու ժամու չափ ետքը փոքրիկ ձէք Սփէրօ տեսաւ որ երկու տղաքը միևնոյն գորքէն կը կարդային զրուկ դիլի տուած, «Ժպտեցաւ ուրախութենէն, փտահ ըլլալով թէ «Ջնջուած պարտամուրհակը» «պատուուած էր :»

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԵՐԸ

Չենք գիտեր ճշմարտութիւն մը ամբողջ Աստուածաշնչին մէջ, որ այնքան ուժով և փափկութիւնով ներգործէ մեր վրայ որքան Աստուծոյ սէրը Աստուածաշնչին մէջ չկայ ասկէ զատ ուրիշ ճշմարտութիւն մը զոր Սատանան այսքան ուզէ ջնջել : Սատանան 6,000 տարիէ աւելի է որ կ'աշխատի համագնի մարդիկը թէ Աստուած չսիրեր զիրենք : Յաջողեցաւ մեր նախածնողները հաւատցնել այս սուտին, և խիստ շատ անգամ կը յաջողի հաւտացնել անոնց սերունդը : Այն դազափարը թէ Աստուած մեզ չսիրեր, շատ անգամ սխալ կրթութեան արդիւնք է : Մայրեր սխալ կ'ընեն երբ զաւակներուն կը սորվեցնեն թէ Աստուած զանոնք չսիրեր եթէ գէշութիւն ընեն, և թէ կը սիրէ միայն այն ատեն երբ բարի կ'ըլլան : Սուրբ Գիրքը ատանկ բան չսորվեցնէր : Գուք չէք սորվեցնէր ձեր զաւակներուն թէ կատեք զանոնք երբ գէշութիւն կ'ընեն :

Անոնց գէշ վարքը ձեր սէրը ատելութեան չփոխեր : Եթէ բանն այդպէս ըլլար, ձեր սէրը շատ անգամ պիտի փոխէր : Ձեր զաւակին բարկացող ըլլալուն կամ անոր անհնազանդութիւն մը գործելուն համար դուրս չէք նետեր զանիկա իր թէ ձերը չէ ան : Ոչ անիկա տակաւին ձեր զաւակն է, և կը սիրէք զանիկա : Եւ եթէ մարդիկ Աստուծոյ մոլորած են, չհետևիր թէ Աստուած կ'ատէ զանոնք : Մեզքն է զոր կ'ատէ ան :

ՄԱՐՏԻ ՀԱՆՆՆՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Table with 2 columns: Name and Amount. Includes names like A. U. S., S. U. R., Z. U. R., Y. I. S., U.

Լուծեցին, Կ. պոլիս. — Յակոբ Կ. Բերդեան, Յովակի Պարութեան, Ե. Ս. Գաբրիէլեան, Ե. Հ. Փաշեան, Զ. Մ. Սրբեան, Հ. Մեթոքեան, Ա. Տ. Ս. Թովմասեան, Ա. Մ. Միխայիլեան, Անտոնի Թիմոքեան, Պրուս. — Արարի վարդապետ, Մարգարէ Նիկողոսեան, Վահան Նիկողոսեան, Յովհաննէս Կարապետեան : Օրտու. — Արարի Յ. Տէր Գալստեան : Ատաբազար. — Նեառն Ա. Ճէրիգեան : Սպայան. — Սէլուի Մ. Աղասեան : Խարբեր. — Էլմաս Մատթէոսեան, Պայծառ Տէր Մովսէսեան, Մարտիկ Գեորգեան, Զարեհիկ Գառնապետ, Աղաւթի Ճանիկեան, Խարբի Ս. Նազարեան, Ալթուն Յովակիմեան, Լուսինա Ղազարոսեան, Սամսոն. — Մեջլիս Գ. Պետրոսեան, Բիւզանդ Պետրոսեան : Վան. — Տեղբան Կ. Ազարեան : Մ. Աղիւ. — Յակոբ Տէր Ղուկասեան, Նշան Շմաւոնեան, Մարգար Ղուկասեան, Տեղբան Մեծատուրեան, Տեղբան Մ. Մանուկեան, Խաչատուր Գ. Անտոնեան, Պարզև Գ. Փափասեան, Գոնեան. — Տ. Յ. Տեղեկեան, Յակոբ Ս. Չարապետ : Սերապիտ. — Տեղբան Գ. Պետրոսեան, Նշան Գ. Պետրոսեան, Մարտիկ : Նալի Գ. Ներսէսեան, Տեղբան Մ. Մանուկեան : Մուսնուստան. — Արշակ Խ. Սարգսյան, Թալա. — Գրիգոր Պ. Պողոսեան, Մարտիկ. — Մեթոքեան Մ. Թերեան : Գաթիկեանի. — Սեղբար Պ. Թաթարեան :

ՀԱՆՆՆՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

Table with 2 columns: Name and Amount. Includes names like A. U. S., S. U. R., Z. U. R., Y. I. S., U.

1. Մովսէսեան արքայ մը. 2. Գաղապար մէկ քաղաք. 3. Արամու եղբոր Թոռնեան մէկը. 4. Հերմոնի կից լեռ մը. 5. Յիսուսի մէկ աշակերտը. 6. Քահանայապետ մը Աքազու ժամանակ (աղէն ձախ). 7. Միջատ մը. 8. Նշանաւոր մարդարե մը. 9. Նոյի Թոռնեան մէկը :

Եթէ նշանակուած անունները վերի օրինակին պէս շարեւ, միջին կարգը վերին վար պիտի կարգաւ մեր փրկչին շքեղ մէկ տիտղոսը : Զան կողք վարէն վեր Եսաւի Թոռնեան մէկը, և ալ կողք վերին վար շար հարուստ մը (վերին գրին համազօրով) :

Կ. պոլիս 804,056 ՀՈՅԳՈՅ

Տարեկան բաժանորդագին 6 դահ. արծաթ, կամիկի, ամէն տեղւոյ համար :

Ամերիկայի Մեծահարկ ընկերութեան կողմէն Արտոնատէր ձ. Բ. ԿԻՐՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏՈՆՊՈՒԼՆՈՒԳՈՒԹՅՈՒՆ
Ի ՏՊԱՐԱՐ ԵՄ. ՅԱՅՈՒ ԳՈՅՈՒՅԱՆ
Տիեզերանոցի Եօզուշու, Ամերիկեան Խան